

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽՁՈՒՄԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի գրականության ամենատիպական կերպարը թերևս հասարակությունից մեկուսացված, օտարված ու ներամիտի, արտաքին աշխարհի հանդեպ փակված մարդն է: Սակայն մարդը օտարվում է արտաքին աշխարհի և հասարակության հետ հաղորդակցման և կապի խզման պատճառով: Բնականաբար կենցաղում և առօրյա կյանքում մարդու և իրականության կապի խզումը տարբերվում է գրականության մեջ դրա արտահայտման ձևից: Այսպես հաղորդակցման ամենաանհրաժեշտ պայմանը և միջոցը լեզվական հաղորդակցումն է, սակայն ժամանակակից մարդու օտարման ու ինքնամեկուսացման օրեցօր աճող երևույթի համար լեզվական հաղորդակցման խզումը, որպես մարդու մեկուսացման պատճառ կարող է մնալ միայն երևույթի հիմնական էությունը բացատրելու հավակնությունից հեռու մասնավոր դեպք: Մինչդեռ գրականությունը մասնավորը ընտրում է որպես գեղարվեստական պայմանականություն: Յուկիո Միսիմայի «Ոսկե տաճարը» վեպում մարդու և արտաքին աշխարհի միջև կապի կայացման խոչընդոտը հերոսի կակազելն է: «Տկար, հիվանդ մանուկ էի ամենավերջինը մանկական բոլոր խաղերում ու զվարճություններում: Կակազելու քնածին արատն իր հերթին ինձ հեռացնում էր իմ տարեկիցներից, ինձ մոտ խորանում էր ինքնամիտփության և առանձնանալու հակումը: Բացի այդ, բոլոր տղաներն էլ գիտեին, որ քահանայի զավակ եմ և նրանց սիրած զբաղմունքը ինձ ծաղրելն էր դարձել՝ պատկերելով, թե ինչպես է կակազող բռնզը՝ (բուդոյայական քահանա) սուտրաներ քնթփնթում: Ընթերցանության դասերին, եթե գրքում կակազող հերոս կար, նրա բոլոր ռեպլիկներն անպայմանորեն բարձրաձայն պետք է կարդացվեին-հատուկ ինձ համար:

Ձարմանալի չէր, որ իմ կակազելը պատ էր բարձրացնում իմ և արտաքին աշխարհի միջև»: Ծաղրը, որին մանուկ հասակում ենթարկվում է Միսիմայի հերոսը, վանականի մեկուսի կեցությունն ընտրելու մոտիվացիաներից մեկն է: Բացի հոգեբանական մոտիվացիայից նրա մեկուսացումը որոշում են նաև ժառանգականությունն ու կենսական հանգամանքները. հանգամանքը

հիմնավորում է կերպարի հոգեբանական մոտիվացիան: Լեզվական հաղորդակցման խզումը պայմանական հնարք է, որ պատճառաբանում է մարդու և իրականության կապի սպառնալուծությունը, մարդու՝ «ունայն առօրեականության» հետ կապ հաստատելու անկարողությունը:

Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխություն» վիպակի հերոս Գրեգոր Ջամզան կերպարանափոխվելով ուտիճի, կորցնում է նաև մարդկային լեզվով հաղորդակցվելու կարողությունը: Ո՛չ բժիշկը, ո՛չ փականագործը, ո՛չ հավատարմատարը, ո՛չ ընտանիքի անդամներից որևէ մեկը, դեպի որոնց դեռ ինքնախոսված մղվում է ուտիճի կերպարանափոխված Ջամզայի մարդկային հոգին, ի գործու չեն այլևս հասկանալ Ջամզայի կենդանական լեզուն, բայց մարդկային ցանկությունները, տրամադրությունն ու մտքերը: Կենդանական աղմուկները և միջատի մարմինը դառնում են թանձր ու հաղորդակցման ցանկացած հնարավորություն բացառող օտարման այն պատճենը, որի մի կողմում Ջամզայի մարդկային էությունն է, մյուս կողմում մարդկային հասարակությունը: Այսպիսով՝ գեղարվեստական պայմանականությունը՝ որպես կերպարանափոխության տրամաբանություն՝ լեզվական հաղորդակցման խզումը, չլուծվող անհամապատասխանություն, հակասություն է առաջացնում հերոսի ներաշխարհի և մարդկանց աշխարհի միջև: Կաֆկայի արտասովոր իրավիճակներում հայտնված հերոսների միտքը դեռ շարունակում է զբաղեցնել կենցաղը: Միսիմայի հերոսն անկարող է հաղթահարել իր լեզվական արատը, Կաֆկայի հերոսը՝ իր կենդանական լեզուն և մարմինը: Երկուսն էլ անգոր են կապ հաստատել իրականության հետ, թեև առօրյան հուզում է Կաֆկայի հերոսին, իսկ Միսիմայի հերոսը ժխտում է այն՝ մերժենալով Դավերժականի և Գեղեցիկի պատկերացումներին: Սակայն երկու դեպքում էլ լեզվի պայմանականության էությունը հաղորդակցման հնարավորությունը բացառելու պատրանք ստեղծելն է:

Մարդկանց միջև հաղորդակցման խզումը գեղարվեստորեն պատկերելու անհրաժեշտությունը գրողին պայմանականությունների որոնումների է մղում: Կոթո Արեն մույնիսկ մարդկային դեմքի՝ որպես հաղորդակցման միջոցի իր սեփական «փիլիսոփայությունն» է ստեղծում: Դեմքը մյուսների հետ կապի անհրաժեշտ նախապայմանն է, քանի որ «անկատար դեմքին» հանձնարարված է «դեպի հոգին տանող արահետի առաքելությունը»: Արեի հերոսը, կորցնելով իր դեմքը, խոստովանում է. «Ես իմ ամբողջ էությամբ կաշկանդված էի, հասկանալով, որ ինչպիսի արտահայտություն էր փորձեի տալ վիրակապերի և մուգ ակնոցի տակ թաքցրած դեմքիս, միևնույն է, այն չէր հասնելու զրու-

ցակցիս»: Դեմքի կորուստն ըստ էության Աբեի վեպում մեկուսացման, մարդկային հաղորդակցման սպառնալու ու օտարման պայմանական միջոց է:

Անցյալ դարի 90-ականներից սկսած օտարված մարդու կերպարը իր գոյության իրավունքն է փորձում հաստատել մահ հայ գրականության մեջ: Գրողներն իսկապես «Ստվերներ խամաճիկների փողոցում» ժողովածուի «Ամմարդ լճափին գտած գրառումներ» պատմվածքում հեղինակը հեռացնում է աշխարհի հետ հաղորդակցման պարամետրերից մեկ ուրիշը՝ հիշողությունը՝ պահելով մնացած մյուս բոլորը. վթարի ենթարկված մարդը կորցնում է իր հիշողությունը, Աբեի հերոսի մահն չի կորցնում իր դեմքը, պահպանում է լեզվական ունակությունը և խոստովանում է՝ «շատ դժվար է ապրել կատարելապես օտարացած քաղաքում, օտար ցեղի մեջ, որին կապող միակ օղակը քարեբախտաբար չջնջված լեզուն է, այն էլ՝ խճողված ինչ-որ անհեթեթ բառերով ու խզումներով»: Հիշողությունը աշխարհը մեզ ծանոթ, քիչ թե շատ հարազատ դարձնող, մեզ աշխարհին կապող օղակ է և մեր կորուստը աշխարհը կարող է մեզ համար դարձնել անճանաչելի և օտար: Նրա կորուստը օտար է դարձնում մահ սեփական անցյալը: Օտարված մարդը լքում է իր տունն ու ընտանիքը, քանզի սպառվել է հարազատության զգացողությունը. «չընտելացանք, մեզ ոչինչ չէր կապում այլևս և արդեն հասկացել էինք, որ արդեն չի էլ կապելու: Կնոջս հետ ընդհանուր անկողին չունեցանք մույնիսկ, թեև, թվում է, հակառակը պիտի լիներ՝ հաշվի առնելով մորույթի հանգամանքը: Սակայն չստացվեց, ինչ-որ բան խախտվել էր թերև: Մի խոսքով՝ հեռացա. որքա՞ն կարելի էր ապրել օտար տանը, օտար մարդկանց հետ: Մենք բացարձակապես չէինք հասկանում միմյանց, մենք միմյայն նյարդայնացնում էինք միմյանց»:

Այսպիսով, գրողը ստեղծում, հիմնավորում է կոնցեպցիաներ, ըստ որի իր կերպարն ունի հաղորդակցման, աշխարհի և մարդկանց հետ կապի սեփական մոդելը, որի բացակայությունը բերում է այդ կապի խզման: Որպես պայմանական կոնցեպցիաներ, դրանք գրողին հնարավորություն են տալիս օտարել կերպարին, ուսումնասիրել օտարված կերպարի հոգեբանական շերտերը և ապացուցել հուսահատ այն համոզմունքը, թե մարդը ժամանակակից քաղաքակրթության մեջ անկարող է վերականգնել հասարակության հետ խզված իր կապը:

Ռաֆայել Նահապետյանի «Ագռավի աղջիկը» ժողովածուի «Գրամեքենա» պատմվածքում հաղորդակցման պայմանականությունը գրոտեսկային բովանդակություն է ստանում, մարդու և աշխարհի կապն իրագործողը գրամեքենան է, որի ստեղծերն աստիճանաբար վայր են ընկնում խզելով գրող-կերպարի և իրականության կապը. «Մարդիկ ու են սկսեցինք զգալի

դժվարությամբ միմյանց հասկանալ, քանի որ խոսելիս որոշ տառեր «կուլ» էի տալիս՝ չէի արտասանում, ավելի ճիշտ՝ չէի կարող արտասանել: Բայց գրամեքենայիս տառերի վայր ընկնելը շարունակվում էր ու, դրանից կախված, բառապաշարս այն աստիճանի աղքատացավ, որ մարդկանց հետ լինելիս գերադասում էի լռել: Ռաֆայել Նահապետյանին հաջողվում է մարդու և իրականության կապի խզման թեմայի դրամատիզմը կոմիզմով շնչող իրավիճակներով մատուցել. «Բայց հետո վայր ընկավ «ս» տառը ու ստիպված խուսափում էի «ս» ունեցող բառեր օգտագործելուց (առօրյա կյանքում նույնպես սկսեցի բացարձակապես անտեսել նման բառերի գոյությունը՝ ինչ խոսք, սա մարդկանց հետ հարաբերվելս նկատելիորեն դժվարացրեց), իսկ Գայանեին ուղղված գրություններում «սիրելիս» սովորական դարձած բառի փոխարեն հայտնվեց «թանկագին»-ը: «Թ»-ի վայր ընկնելուց հետո ցանկացա անցնել «իմ միակ» դիմելաձևին, բայց ժամանակին նկատեցի, որ «Ա»-ն նույնպես շարժվում է: Պահպանեցի «թանկագին»-ը, այն փոքրիկ տարբերությամբ միայն, որ «թ» չէի մեքենագրում: «Անկագին», -գրում էի, -երեկ երեկոյան...: Եվ այլն:..... Ծանոթներս սկսեցին ինձանից խուսափել, իսկ Գայանեն, «Անկագին» դիմելաձևը «Ստոր ու նողկալի ծաղր» համարելով, վերջ տվեց մեր ծանծաղիորեն երկար ու ծանծաղիորեն անիմաստ կապին»: Վերջում մնում է միայն իրականության հետ կապող վերջին ստեղծը՝ «շ» տառը: «Շ» տառով հաղորդակցվելը առավել քան անհեթեթ է: Գրողը հարվածում է վերջին ստեղծին. «Երրորդ զարկից հետո գրամեքենաս իրականության հետ բացարձակապես խզվեց»: Երբ գրամեքենան թեկուզ որպես հաղորդակցման պայմանականություն, հավակնում է իրականության հետ բացարձակ կապ հաստատողի դերում լինել, պայմանականությունը շրջվում է գրոտեսկի, բայց գրոտեսկի հակառակ կողմում Ռ.Նահապետյանը նկատում է իրականության հետ կապը կորցրած մարդու «դառը և ահավոր» ժպիտը:

Արդեն խոսեցիք Զ.Կաֆկայի «Կերպարանփոխություն» վիպակում մարդու և իրականության կապի խզման մասին: Կաֆկան (XX դարի գրականությունն առհասարակ) մետամորֆոզը որպես գեղարվեստական պայմանականություն կիրառում է մարդու ինքնամեկուսացումն ու օտարության զգացողությունը պատկերելու համար: Կերպարաստեղծման ոչ մի գեղարվեստական միջոց թերևս այդքան խոր և բովանդակալից չի արտահայտում մարդու օտարումը, որքան՝ մետամորֆոզը: Կերպարանափոխությունը մարդու և աշխարհի բացարձակ, անդառնալի խզումն է: Աշխարհը խորթ և օտար է մարդուն՝ նրա հոգուն և ոչ ոք գրական կերպարներից այնքան խոր և ողբերգականորեն չի ապրել այդ զգացումը, որքան Ալբեր Զամյուի «Օտարը»

վեպի հերոս Մյուրսոն: Աշխարհի օտարության զգացողությունը մարդու հոգում տրոհում է մարմինն ու հոգին: Գ.Խանջյանի «Շարժասանդուղք» ժողովածուի «Փոսը» պատմվածքում մարդու երկատվածությունը հենց նյութական աշխարհին պատկանող մարմնի և նրանում ժամանակավորապես հանգրվանած հոգու տրոհումն է. «Ինչու» չի կարող դեն մետել իր բոլոր թելերով նյութական աշխարհի հետ կապված այդ ատելի, փտող մսեղիքը և ստանալ բացարձակ ազատություն: Զե՛ որ միմյանց օտար եմ՝ ինքն ու իր մարմինը»: Վերոհիշյալ տրոհումն այն կետն է, որից աննկատ սկիզբ է առնում կերպարանափոխությունը:

Ռաֆայել Նահապետյանի «Ագռավի աղջիկը» ժողովածուի «Հրաժեշտ» վիպակը պատմում է մարդկանց հրաժեշտ տվող մեռյալի անցյալի մասին: Կոմպոզիցիոն ձև է ընտրված առաջին դեմքով պատումը: Մեռյալը հիշում, պատմում է մարդկային բազմապիսի հարաբերություններով հանգուցավորված իր անցյալը, որի կենտրոնում իր օտարված կերպարն է: Դեռ իր մահից առաջ նա հրաժեշտ է տվել իր հարազատներին ու մտերիմներին, օտարվել նրանցից: Հրաժեշտը Հրաժեշտից առաջ է եղել. մահը որպես հրաժեշտ օտարումի, բացարձակ խզման պայմանականությունն է, մարդկանց աշխարհը վերադառնալու անհեթեթության գիտակցումը ու թեև Ռ.Նահապետյանի պատումը կենդանի հումորով է շնչում, բայց այդ հումորը սառչում է փոխվելով «դառը և ահավոր» ժպիտի:

Կերպարանափոխությունը նյութական աշխարհին պատկանող մարմնի ժխտումն է նաև, նրա փոխարինելիության և օտարության գիտակցումը, աշխարհում օտար լինելու զգացումը: Հիշենք Հերման Հեսսեի «Տափաստանի գայլը» վեպի հերոս Գարի Գալլերին, որ էությանը իրեն տափաստանի գայլ էր զգում, կամ Ժան-Պոլ Սարտրի «Սրտխառնուք» վեպի հերոս Անտուան Ռոկանտենին, որ հանկարծ ինչ-որ մի պահի, երբ խզվում է իր և աշխարհի ռացիոնալ կապը, կինոդահլիճի «չափազանց մարդկային» ամբոխի մեջ իրեն ծովախեցգետին է զգում: Սեզանում նման կերպարի օրինակ կարող է համարվել Վահագն Գրիգորյանի «Թռչունի հոգին» վիպակի Վաղինակը, որ մարդկանց աշխարհից մեկուսացել էր շենքի տանիքում և էությանը իրեն թռչուն էր զգում: Կերպարանափոխությունը կարող է մնալ ներուճակություն, էականն այստեղ այն է, որ կերպարը ներքուստ զգում, ապրում է այդ կերպարանափոխությունը կամ օտարումը և խզումը, մնացածը պատկերավորման խնդիր է: Սակայն մարդն իրեն ոչ միայն կենդանի է զգում, այլ նաև անշունչ առարկա: Խոսում է Ռոկանտենի միտքը. «Առարկան ես ինքս եմ»: Էականը կերպարանափոխության մեջ այն է, որ մարդն ինքն իրեն ընկալում է որպես օտար,

իրենից հեռու ինչ-որ մի բան: Այդ զգացողությունն արտահայտելու համար գրականությունը դիմում է գեղարվեստական պայմանականությունների լեզվին: Այսպես Կորո Աբեի «Մարդ-արկղը» վեպում արկղը առարկայական սիմվոլ է, որի ներսում թաքնվում է հասարակությունից օտարված մարդը, իսկ մարդ-արկղը օտարված մարդու գրոտեսկային -այլաբանական կերպարն է: Օտարվող, հասարակությունից իր փախուստը հռչակող մարդը փնտրում է թաքստոցներ: Ահա Գուրգեն Խանջյանի «Վախը» պատմվածքի հանգուցալուծումը. «Անկողնուց ցած է գլորվում: Փորձեց կառչել վերմակից, բայց ապարդյուն, ձեռքերը չենթարկվեցին. ձեռքեր չկային: Ընկավ հատակին՝ տախտակների միջև եղած ճեղքի որոգայթը և շարունակեց գլորվել, զգալով աստիճանաբար լայնացող ճեղքից փչող զովը: Իսկ արդեն պատի մոտ ճեղքն այնքան լայնացավ, որ կորցրեց հենակետերը, սահեց և ընկավ մութ ու փոշոտ խորշը, հատակի տակ»:

«Սա թերևս վատ ապաստարան չէ, - խիտ ու փափուկ փոշեշերտի մեջ ընկղմվելով, մտածեց Մ-ն: Այստեղ ինձ չեն գտնի»:

Կորո Աբեի հասարակությունից փախչող կերպարները թաքնվում են հիվանդանոցներում, մեկուսանում սենյակներում, կամուրջների տակ, նրանք իրենց հուսալի և ապահով են զգում արկղի մեջ, վիարակապի, մուգ ակնոցների կամ դիմակի հետևում: Ժան -Պոլ Սարտրի «Սենյակը» նովելի հերոսը՝ Պիեռը մարդկանց աշխարհից մեկուսանալով փակվում է կիսամութ մի սենյակում:

XX դարի գրականությունը մարդու մենությունն ու օտարումը հիմնավորում է պայմանական միջավայրով, որում հայտնվում է կերպարը՝ որպես իր տարածության մեջ շարժման հիմնական հնարավորություն: Այդպիսին են օրինակ սենյակի, հիվանդանոցի կամ ասենք գնացքի մետաֆորները: Ռուս ժանակակերպից գրող Վիկտոր Պելեվինի «Դեղին ճառագայթ» վիպակի հերոսը խոստովանում է, թե գնացքի ուղևորները չեն ճանաչում միմյանց, նրանք օտարված են իրարից, այսպիսով գնացքը վերածվում է օտարված հասարակության յուրօրինակ այլաբանության: Մարդիկ հիվանդանոցներում և գնացքներում հանդիպում են պատահաբար, նրանց կապը պատահական է, անկայուն և ժամանակավոր. այս է ենթադրում գնացքի և հիվանդանոցի փոխաբերությունը: Հայ գրականության մեջ օտարման այսպիսի պայմանականություններով հարուստ է հատկապես Գ.Խանջյանի արձակը: Նրա «Հիվանդանոց» և «Նստիկ Ա գնացքը» վեպերի պայմանական միջավայրը գնացքը և հիվանդանոցն են, որպես օտարված հասարակության այլաբանություն:

Կարելի է խոսել նաև XX դարի գրականության մեջ տարածում գտած պատի մետաֆորի մասին: Պատը թեև առարկայականություն է ենթադրում,

բայց հաճախ, որպես XX դարի գրականության պատկերամտածողության առանձնահատկություն, դա այն անտեսանելի, բայց և անհաղթահարելի պատմեշն է, որ մարդկանց միջև կանգնում է իբրև հաղորդակցման արգելք կամ խզում: Եթե նորից հիշենք Միսիմայի հերոսի խոստովանությունը, թե «իմ կակազելը պատ էր բարձրացնում իմ և արտաքին աշխարհի միջև», կամ Այրիս Մյորդոքի «Բրունոյի երազը» վեպի հետևյալ տողերը, թե «նրանք ակնդետ կհետեվեն, ինչպես իրենց միջև կբարձրանա օտարման պատը», ապա կնկատենք, որ պատը, առարկայական պատկերի «կարծրություն» չի ստանում և դառնում է օտարման յուրօրինակ խորհրդանիշ, որ Մյորդոքի պատկերամտածողությամբ որոշակիանում է, գտնում իր անփոխարինելի և դիպուկ մակդիրը:

Եվ այսպես XX դարի գրականությունը ժամանակակից մարդու օտարումը, ինքնամեկուսացումն ու հաղորդակցման խզումն արտահայտելու համար դիմում է գեղարվեստական պայմանականությունների լեզվին՝ պայմանականությունների հնագույն լեզուն հարստացնելով իմաստային նոր բովանդակությամբ:

Գրականություն

1. Ֆրանց Կաֆկա - «Ղատավարություն», Ե., Ապրիլ, 1991թ.
2. Герман Гессе — Степной волк, Харьков, "Фолио" 1999.
3. Жан-Поль Сартр — Тошнота, И. А., 1989, 7.
4. Кобо-Абе. "Человек-ящик", И.А. 1976, 8,9.
5. Կորո-Արե - Երեք վեպ, Ե., Սովետական գրող, 1985
6. Юкио Мисима — Золотой храм, Ростов-на-Дону, Феникс, 1999
7. Айрис Мердок — "Сон Бруно", И.А., 1987, 6,7, 8
8. Виктор Пелевин — "Желтая стрела" WWW. Lib. Ru
9. Գուրգեն Խանջյան - «Շարժասանդուղք», Եր. Նաիրի, 1991.
10. Ռաֆայել Նահապետյան - «Ազոալի աղջիկը», Ե., Սոր-Դար, 2000.
- 11 Վահագն Գրիգորյան - «Թռչունի հոգին» Երևան, Զանգակ, 2002.